# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 134-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի փետրվարի 11-ը՝ ժամը 17:00-ն:

Կողմ - 12 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 133-Ա

## ՆԱԻՐԱ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Երևան քաղաքի Դավթաշեն 3-րդ թաղամաս 10/60 հասցեի բնակիչ Նաիրա Գարեգինի Շահինյանին (անձնագիր AS0302684) տրամադրել անշարժ գույքի հարկի արտոնություն՝ ազատելով իրեն պատկանող Մեղրի քաղաքի Ադելյան 7/12 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 09-005-0040-0053-001-012) բնակարանի համար 2021-2024 թվականների հաշվարկված անշարժ գույքի գծով պարտավորություններից՝ 2723 (երկու հազար յոթ հարյուր քսաներեք) ՀՀ դրամի չափով:

Կողմ - 12 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 132-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Զիջել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող կառուցապատման իրավունքով Նաիրա Գարեգինի Շահինյանին 01.02.2008 թվականի թիվ 58 պայմանագրով տրամադրված հողամասի 2024թվականի վճարման ենթակա վարձավճարի պարտավորությունը՝ 3234 ՀՀ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող օրվանից:

Կողմ - 12 Դեմ - 0 Ձեռնպահ - 0
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 131-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 36/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՎՈԼՈԴՅԱ ԱՐԳԱՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ և 66-րդ հոդվածների, 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» թիվ 225-Ն օրենքի և հաշվի առնելով Մեղրի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Զորավար Անդրանիկի 36/11 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության «բնակելի կառուցապատման» գործառնական նշանակության 0.00489 հա հողամասը (կադաստրային ծածկագիրը՝ 09-005-0068-0038-հց և 09-005-0068-0007-հց)՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Վոլոդյա Արգարի Համբարձումյանին 91820 (իննսունմեկ հազար ութ հարյուր քսան) դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով՝ քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար:

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 12 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՁԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 130-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ - 12 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 129-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ղեկավարի 2024 թվականի դեկտեմբերի 16-ի N 968-Ա որոշումը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն համարվող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին» N11-Ա որոշմամբ հաստատված հավելվածում (համայնքապետարանի հիմնական միջոցներում) կատարել լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 128-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածներով և հաշվի առնելով Մեղրի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2025 թվականի բյուջեն՝

1) եկամուտների գծով՝ 2 198 023 200 (երկու միլիարդ մեկ հարյուր իննսունութ միլիոն քսաներեք հազար երկու հարյուր ) ՀՀ դրամ,

2) ծախսերի գծով՝ 2 489 095 000 (երկու միլիարդ չորս հարյուր ութսունինը միլիոն իննսունհինգ հազար ) ՀՀ դրամ,

3) դեֆիցիտը (պակասուրդը)՝ 291 071 800 (երկու հարյուր իննսունմեկ միլիոն յոթանասունմեկ հազար ութ հարյուր ) ՀՀ դրամ:

2.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները՝ համաձայն N1 հավելվածի:

3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն N2 հավելվածի:

4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N3 հավելվածի:

5.Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը) ՝ համաձայն N4 հավելվածի:

6.Հաստատել համայնքի բյուջեի համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն N5 հավելվածի:

7.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N6 հավելվածի:

8.Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

9.Սահմանել ,որ համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել սույն որոշմամբ սահմանված չափաքանակների 15%-ը:

10.2025 թվականի բյուջեի եկամուտների գերակատարումը ուղղել հնգամյա ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացմանը:

11.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 127-Ա

### «ՄԵՂՐԻԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N133-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով՝ Մեղրի համայնքի ավագանին որոշում է

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել «Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի՝ ««Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N135-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N133-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ - 12 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 126-Ա

### «ՄԵՂՐԻԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N132-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1 և N1.1 հավելվածների:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի՝ ««Մեղրիի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N136-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N133-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ - 12 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՁԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 125-Ա

### «ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԻՔ» ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N131-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել «Մեղրի համայնքի «ԱՐԵՎԻՔ» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի՝ ««Մեղրի համայնքի «ԱՐԵՎԻՔ» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N137-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N131-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ - 12 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՉԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 124-Ա

### «ԱԳԱՐԱԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N130-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել «Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

1)Հաստատել «Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Կարճևանի մասնաճյուղի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1.1-ի:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի՝ ««Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և մասնաճյուղերի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N138-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N130-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ - 12 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 123-Ա

### «ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N129-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

1)Հաստատել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Լեհվազի մասնաճյուղի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1.1-ի:

2)Հաստատել «Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Վարդանիձորի մասնաճյուղի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1.2-ի:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի՝ ««Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և մասնաճյուղերի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N139-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N129-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ - 12 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՋԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 122-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի N79-Ա ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Մեղրի համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 30-ի՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N128-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N79-Ա որոշման 2-րդ կետը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ - 12 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 121-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՑԱԽՅԱՆ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԵՎ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԻՋՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում արցախյան 1-ին և 2-րդ պատերազմներում զոհված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքների նկատմամբ (համակեցությամբ բնակվող) ընթացիկ առ 01.01.2025թ. և առ 31.12.2025թ. աղբահանության ծառայության դիմաց գանձվող տեղական վճարի գծով արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից և տարածվում է 2025թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա:

Կողմ - 12 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՉԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 120-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանել վարձավճարների արտոնություններ՝ հետևյալ կարգավիճակ ունեցող ընտանիքների երեխաներին.

1)100 % արտոնությունից օգտվելու իրավունք ունեն՝

ա.երկկողմանի կամ միակողմանի ծնողազուրկ երեխաները (ներառյալ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները).

բ. հաշմանդամություն ունեցող երեխաները.

գ. խնամակալության հանձնված երեխաները.

դ. միևնույն ընտանիքից 2 (երկու) և ավել երեխայի նույն հաստատությունը հաճախելու դեպքում զեղչել մեկ երեխայի վարձավճարը, եթե ընտանիքը ներառված է ընտանեկան և սոցիալական նպաստների պետական ծրագրում.

ե.2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում վերաբնակեցված ընտանիքների երեխաները.

2)50 % արտոնությունից օգտվելու իրավունք ունեն՝

ա․1-ին և 2-րդ հաշմանդամության խումբ ունեցող ծնողների երեխաները.

բ․բազմազավակ (4 և ավել երեխա ունեցող) ընտանիքի երեխաները, եթե ընտանիքը ընդգրկված չէ պետական նպաստ համակարգում:

2. Արտոնությունների սահմանման պատասխանատվությունը դնել տվյալ հաստատության տնօրենի վրա:

3․Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ - 13 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 119-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՕՐԵՆՔՈՎ ՉՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2025 թվականի համար օրենքով չսահմանված տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա:

Կողմ - 12
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

Դեմ - 0

Ձեռնպահ - 1
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 118-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 6-րդ, 14-րդ հոդվածների դրույթներով, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը՝համաձայն հավելված 1-ի:

2.Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2025 թվականի տեղական վճարների տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները՝ համաձայն հավելված 2-ի:

3.Սույն որոշման 1-ին հավելվածի իմաստով գոտիները ներառում են հետևյալ բնակավայրերը.

13 - 14 -րդ գոտիներ՝ Մեղրի և Ագարակ քաղաքները,

17 - 20-րդ գոտիներ՝ բոլոր գյուղական բնակավայրերը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա:

| Կողմ - 7 | Դեմ - 3 | Ձեռնպահ - 3 |
| --- | --- | --- |
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ<br>ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ<br>ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ<br>ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ<br>ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ<br>ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ<br>ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ | ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ<br>ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ<br>ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ | ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ<br>ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ<br>ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 117-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 137-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Մեղրի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N137-Ն որոշմամբ հաստատված N1,N2,N3,N4 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N1, N2, N3, N4 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 13 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՂԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 116-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հերթական նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N137-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին.

3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում 2025 թվականի համար օրենքով չսահմանված տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին.

4)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից 2025 թվականին մատուցվող ծառայությունների վճարների դիմաց արտոնություններ սահմանելու մասին.

5)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի արցախյան 1-ին և 2-րդ պատերազմներում զոհված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին

աղքահանության ծառայության դիմաց գանձվող տեղական վճարի պարտավորությունների զիջման արտոնություն տրամադրելու մասին.

6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 30-ի N79-Ա որոշման 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու մասին.

7)«Մեղրի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և մասնաճյուղերի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N129-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

8)«Ագարակի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և մասնաճյուղերի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N130-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

9)«Մեղրի համայնքի «Արևիք» արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N131-Ա որոշումն ուժը կորցրած ճան1աչելու մասին.

10)«Մեղրիի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N132-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

11)«Մեղրիի կոմունալ տնտեսություն, բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N133-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

12)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին.

13)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն համարվող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին.

14)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման հանձնելու մասին.

15)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 36/11 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով Վոլոդյա Արգարի Համբարձումյանին օտարելու մասին.

16)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի վարձավճարի պարտավորությունը զիջելու մասին.

17)Անշարժ գույքի հարկի արտոնություն սահմանելու մասին.

18)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ - 13 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 24
ք.Մեղրի